ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- հուլիսի 2022 թվականի №---Ա
ք. Երևան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՈՒԳԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

1) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) իրականացրած՝ 2021 թվականի 4-րդ եռամսյակի ընթացքում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից սպառման համակարգերի՝ բաշխման ցանցին միացման գործընթացի վերլուծության արդյունքում պարզվել է, որ մի շարք դեպքերում չեն պահպանվել սպառման համակարգերն էլեկտրական ցանցին միացման գործընթացը կարգավորող իրավական ակտերով՝ Հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358-Ն որոշմամբ հաստատված՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններով, իսկ 2022 թվականի փետրվարի 1-ից սկսած՝ Հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի №523-Ն որոշմամբ հաստատված՝ էլեկտրաէներգետիկական շուկայի բաշխման ցանցային կանոններով (այսուհետ՝ Կանոններ) սահմանված ժամկետները,

2) հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը՝ Հանձնաժողովը 2022 թվականի ապրիլի 26-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Կանոններով սահմանված պահանջների հնարավոր խախտման փաստի ուսումնասիրության նպատակով, որի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2022 թվականի ապրիլի 26-ի №ԳԲ/34.3-Մ2-13/1310-2022 գրությամբ,

3) վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2022 թվականի մարտի 25-ի №Ե-190-22 և հունիսի 28-ի №Ե-467-22 գրություններով ներկայացրել է իր պարզաբանումները, մասնավորապես՝ Կանոններով սահմանված ժամկետների չպահպանումը պայմանավորելով բնակիչների կողմից աշխատանքների խոչընդոտմամբ, դիմող անձանց կողմից դիմումներից հրաժարմամբ, դիմող անձանց սպառման համակարգերն էլեկտրաէներգիայի ընդունմանը պատրաստ չլինելով, դիմող անձանց հետ ժամկետների երկարաձգման համաձայնագրերի կնքմամբ, տեղական ինքնակառավարման մարմինների գործողություններով և այլն: Ընկերությունը նշել է նաև, որ պայմանավորված Երևան քաղաքի՝ շինարարության համար անհրաժեշտ թույլտվությունների ստացման էլեկտրոնային համակարգի գործարկման դադարեցմամբ, այսուհետ նման թույլտվության ստացման բոլոր դիմումներն ընդունվելու և համաձայնեցումներն իրականացվելու են Mulberry համակարգի միջոցով, ուստի Ընկերության կողմից էլեկտրական ցանցին միացման՝ Կանոններով սահմանված ժամկետների չպահպանման համար հիմք հանդիսացող՝ Երևանի քաղաքապետարանից ստացված փաստաթղթերի պատճենների ներկայացումն Ընկերության հիմնավորմամբ իրագործելի չէ: Նշված խնդրի մասին Ընկերությունը տեղեկացրել էր նաև 2022 թվականի ապրիլի 15-ի №Ե-246-22 գրությամբ,
4) Հանձնաժողովի իրականացրած՝ 2022 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում Ընկերության կողմից սպառման համակարգերի՝ բաշխման ցանցին միացման գործընթացի վերլուծության արդյունքում ևս պարզվել է, որ մի շարք դեպքերում կրկին չեն պահպանվել սպառման համակարգերն էլեկտրական ցանցին միացման՝ Կանոններով սահմանված ժամկետները,
5) հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը՝ Հանձնաժողովը 2022 թվականի հունիսի 29-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Կանոններով սահմանված պահանջների հնարավոր խախտման փաստի ուսումնասիրության նպատակով: Նշված և 2022 թվականի ապրիլի 26-ից Ընկերության նկատմամբ հարուցված վարույթների ավելի արագ ու արդյունավետ լուծումն ապահովելու համար դրանք, հիմք ընդունելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին

մասը, միացվել են, ինչի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2022 հունիսի 29-ի №ԳԲ/34.3-Մ2-13/2117-2022 գրությամբ,

6) վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը, ըստ էության, կրկնել է սույն որոշման երրորդ պարբերությունում նշված հիմնավորումները,

7) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ մի շարք դեպքերում խախտվել են Կանոններով սահմանված՝ սպառման համակարգերն էլեկտրական ցանցին միացման ժամկետները, ինչն ուղղակիորեն հանգեցրել է մի խումբ դիմող անձանց (սպառողների) իրավունքների կամ օրինական շահերի խախտման, իսկ Ընկերության ներկայացրած հիմնավորումները բավարար չեն նշված խախտումների համար վերջինիս պատասխանատվության չենթարկելու համար: Մասնավորապես.

ա. 2021 թվականի թվականի 4-րդ եռամսյակի մասով՝ 235, իսկ 2022 թվականի առաջին եռամսյակի մասով 308 դիմող անձանց սպառման համակարգերը հաշվետու եռամսյակի ավարտի դրությամբ միացված չեն եղել էլեկտրական ցանցին, միացվել են ավելի ուշ,

բ. 2021 թվականի թվականի 4-րդ եռամսյակի մասով՝ 57, իսկ 2022 թվականի առաջին եռամսյակի մասով՝ 46 դիմողի դեպքերում Ընկերությունը հիմնավորել էր, որ դիմող անձանց սպառման համակարգերը պատրաստ չեն էլեկտրաէներգիա ընդունելուն, սակայն հիմնավորող փաստաթուղթ չի ներկայացվել,

գ. 2021 թվականի թվականի 4-րդ եռամսյակի մասով՝ 396, իսկ 2022 թվականի առաջին եռամսյակի մասով 139 դեպքերում ներկայացվել էր, որ դիմող անձանց հետ կնքվել են միացման ժամկետի երկարաձգման վերաբերյալ համաձայնագրեր, ինչը Կանոններով նախատեսված չէ,

դ. 4 դեպքում նշված է, որ առկա է հողահատկացման խնդիր, սակայն որևէ հիմնավորող փաստաթուղթ կցված չէ,

ե. 2021 թվականի թվականի 4-րդ եռամսյակի մասով՝ 146, իսկ 2022 թվականի առաջին եռամսյակի մասով 193 դեպքերում նշված է, որ միացման ժամկետների ուշացման պատճառը եղել է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից համապատասխան թույլտվությունների և համաձայնեցումների չտրամադրումը կամ տրամադրման ձգձգումը, սակայն նշվածը հիմնավորող փաստաթուղթ կցված չէ: Ավելին, միացման ժամկետի

ուշացմամբ միացած գործերի ընտրանքային կարգով ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ մի շարք դեպքերում, նույնիսկ եթե հաշվի առնվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից համաձայնեցումների և թույլտվությունների տրամադրման ժամկետները, միևնույնն է, սպառման համակարգերն էլեկտրական ցանցին միացման ժամկետները գերազանցվել են,

և հիմք ընդունելով ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին, 6-րդ մասերը և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Կանոններով սահմանված՝ սպառման համակարգերն էլեկտրական ցանցին միացման ժամկետների խախտման համար Ընկերությանը տուգանել 20 000 000 (քսան միլիոն) դրամ գումարի չափով:
2. Ընկերությանը՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում որոշման 1-ին կետով նախատեսված գումարը 900005242327 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
2) Ընդունել ի գիտություն, որ Հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի №523-Ն որոշմամբ հաստատված՝ էլեկտրաէներգետիկական շուկայի բաշխման ցանցային կանոնների համաձայն՝ միացման ժամկետների խախտման դեպքում պարտավոր է դիմող անձանց վճարել տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար միացման վճարի 0,5 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան միացման վճարի ընդհանուր գումարը: Նշված նորմն ուժի մեջ է մտել 2022 թվականի փետրվարի 1-ից և կիրառելի է բոլոր այն դիմող անձանց պարագայում, որոնց սպառման համակարգերը միացվել են 2022 թվականի փետրվարի 1-ից հետո.
3) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում ներկայացնել էլեկտրական ցանցին միացման ժամկետի խախտումներով չմիացված սպառման համակարգերի՝ էլեկտրական ցանցին միացման ժամանակացույց.
4) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել էլեկտրոնային համակարգ ներդնելու վերաբերյալ առաջարկություն՝ ներդրման ժամանակացույցով, որը թույլ կտա դիմող անձանց հետևել իրենց սպառման համակարգերի՝ էլեկտրական ցանցին միացման գործընթացի քայլերին, և որտեղ կարտացոլվեն դիմումի ամսաթիվը, միացման վճարի

վճարման ամսաթիվը, դիմումի ընթացքը, ներկա կարգավիճակը՝ յուրաքանչյուր փուլում պատասխանատու անձանց (ինչպես Ընկերության, այնպես էլ կապալառու կազմակերպությունների) աշխատանքային հեռախոսահամարներով և էլեկտրոնային փոստի հասցեներով.

5) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել սպառման համակարգերի՝ էլեկտրական ցանցին միացման գործընթացի բարելավման վերաբերյալ Ընկերության առաջարկությունները:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը ՝ բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով նախատեսված դեպքերի:
4. Սույն որոշումը սահմանված ժամկետում կամովին չկատարելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- հուլիսի 2022թ.